ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ՄԱՍԻՆ

Սարգիս Մխիթարյան

Անցյալ դարի 20-60-ական թվականներին բանասիրությունը և պատմագիտությունը, հենվելով վիմական որոշ արձանագրությունների տվյալների վրա, առաջադրել են մի երկրորդ[1], իսկ այժմ արդեն երրորդ Գրիգոր Մագիստրոսի խնդիր[2]: Փաստորեն **Գ. Հովսեփյանի** ‹‹Խաղբակեանք կամ կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ›› աշխատության լույսընծայումներով մագիստրոսագիտության առջև դրվել են նոր խնդիրներ[3]: *Հարցերը բանասիրական ու պատմագիտական բնույթի են: Սկզբից ևեթ կեչառիայան գրվածքների **վերծանումների** էությունը սա է. հայտնի մի քանի վիմագրերի **Գրիգոր Մագիստրոսի** և մատենագրական աղբյուրների **Ապիրատ Ապիրատյանի (Հասանյանի)** ով լինելը պարզելը:* Հոդվածում անդրադարձ է կատարվում Գրիգոր Մագիստրոսի և Ապիրատ Ապիրատյանի (Հասանյան) կյանքի էական մանրամասների քննությանը: Ապիրատ իշխանը որոշ հետազոտողների ուսումնասիրություններում հանդես է բերվել՝ ա) իբրև Պահլավունիների «մի անհայտ ճյուղի» ներկայացուցիչ[4] ու կալվածքների տեր. բ) իբրև մի իշխան, որ տաղանդաշատ մատենագիր Գրիգոր Պահլավունի Մագիստրոսի սեփական կալվածքներում կատարած կառուցումների համահեղինակ է կամ հեղինակ:

Առաջադրվող վարկածները երբեմն փոխում են ինչպես Պահլավունիների ազգաբանությունը, այնպես էլ մասնավորաբար Գրիգոր Մագիստրոսի՝ նշանավոր մշակութային-պետական գործչի մասին եղած

---

[1] **Գ. Յովսեփեան,** Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, Անթիլեաս, 1969, էջ 158-159:

[2] Տե՛ս **Կ. Մաթևոսյան**, Անիի ազնվականության պատմությունից կամ երեք Գրիգոր Մագիստրոս, Ե., 2015, էջ 5-103:

[3] Տե՛ս **Ն. Ադոնց**, Քննական տեղեկագիր պրոֆ. Ն. Ադոնցի մասին. Տ. Գ. Յովսեփեան, Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, էջ 446: Մենք նկատի ունենք գրքի նաև մասնակի վերահրատարակությունը Երևանում 1938 թվականին:

[4] **Ն. Ակինեան,** Ներսէս Լամբրոնացի, Վիեննա, 1956, էջ 372-373: Գ. Յովսեփեան, Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, էջ 158-161:

պատկերացումները, ակամա վերագնահատվում են նրա կենսագրության շատ էջեր: Հասկանալի է, որ դա արվում է ազնիվ նպատակներով, քանի որ գործ ունենք միջնադարյան դարակազմիկ հեղինակի ինչպես մշակութային, այնպես էլ մատենագրական ժառանգության հետ: Սակայն ավանդույթի ուժով մեր միջնադարի համար դարակազմիկ մեծությունների կողքին հաճախ նրանց կրկնակներին են փնտրում, ու մի օր էլ տեսնում ես՝ հայտնվեց երկրորդ Մովսես Խերենացին[1], երկրորդ Գրիգոր Նարեկացին[2], երկրորդ Նահապետ Քուչակը[3], երեք Գրիգոր մագիստրոսներ[4] և այլն: **Գրիգոր-Ապիրատ Ապիրատյանի** մասին նոր շրջանի պատպատմագրության մեջ առաջինը խոսում է մեծ գիտնական Գ. Հովսեփյանը[5]: Այս տոհմը նաև **Հասանյան** են կոչում: Նա իրական-պատմական անձ է, և նրա մասին պատմիչ Մ. Ուռհայեցին ասում է, որ **ոմն Ապիրատ՝ որդի Հասանի, որ Հայոց մեծ իշխան էր, Աշոտ արքաեղբոր վասալը, նրանից հեռանում է, թագավոր Հովհաննեսից երկյուղ է կրում և ապստամբելով նրա դեմ՝ փախչում Դվին**[6]: Սա, նախապես Աշոտ Բագ-Բագրատունու համախոհը լինելով, նրա հրամանով գերված Հովհաննես-Սմբատ արքային (1019-1041) պետք է սպաներ, սակայն կրկին գահին է վերադարձնում[7]: Դրա պատճառը պատմագրությանը հայտնի չէ, և Ուռհայեցին դա խղճահարությամբ է բացատրում: Նա հավանաբար ար-

---

[1] **Մ. Աբեղյան**, Երկեր, հ. Գ, Ե., ՀՍՍՀ ԳԱ հր., 1968, էջ 286:

[2] Տե՛ս **Ն. Ակինեան**, Նարեկ, Մատեան ողբերգութեան Ս. Գրիգոր Նարեկցիի (գրախօսութիւն), Հանդէս ամսօրեայ, 1949, թ. 1-4, էջ 118-121: Արգո գիտնականը Գրիգոր Նարեկցու դեպքում կասկածում է նրա՝ ‹‹**Երգ Երգոցի Մեկնութեան**›› հեղինակ լինելուն, որն արդարացված չէ: Նրա կարծիքով Մեկնության հեղինակն է Նարեկ գյուղի հասարակ մի քահանա, որին նույնպես Գրիգոր են կոչել՝ **Գրիգոր քահանա:** Սա նշանակում է, որ Ակինյանը թերագնահատում է **Երգի** բարդությունը և նրա **Մեկնության** հեղինակ համարում հասարակ գյուղական քահանայի: Մենք ժամանակին որոշակիորեն քննադատել ենք այս մոտեցումը: Տե՛ս **Ս. Մխիթարյան,** 10-11-րդ դարերի հայ մշակութային դաշտը և գրականության զարգացման յուրահատկությունները, Ե., ԵՊՀ հր., 2009, էջ 92:

[3] Նահապետ Քուչակի բանաստեղծական աշխարհը, Ե., 2001, էջ 22:

[4] Տե՛ս Կ. Մաթևոսյան, Անիի ազնվականության պատմությունից կամ երեք Գրիգոր Մագիստրոս, էջ 5-103:

[5] Գ. Յովսեփեան**,** Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, էջ 159:

[6] **Մ. ՈՒռհայեցի,** Ժամանակագրություն, Ե., 1991, էջ 16:

[7] Տե՛ս **Աշխարհացոյց Վարդանայ Վարդապետի,** Բարիզ, 1960, էջ 97:

քայի հետ համաձայնության է գալիս՝ նաև ստանալով մեծ հարստություն: Սակայն Աշոտ արքաեղբոր վստահությունը չարաշահելու, նրա վրեժխնդրությունից խուսափելու և թերևս Հովհաննես արքայի լիակատար վստահությանն էլ չարժանանալու պատճառով հեռանում է **Ապուսուար** արաբ զորավարի մոտ և սպանվում նրա ձեռքով նույն 1021 թվականին:

Բայց ինչպես հիշյալ **Ապիրատի**, այնպես էլ նրա հայր **Հասանի** Պահլավունիական ծագման մասին մեր մատենագրության մեջ որևէ կոնկրետ տեղեկություն չկա հատկապես անմիջական ժամանակակիցների վկայությամբ: Այդպիսիք չկան արաբական, ասորական և հունական աղբյուրներում: Ընդհանրապես նրա մասին շատ քիչ տեղեկություններ կան: Ղ. Ալիշանն առաջինն է գրում է, որ Գրիգոր Համզեի (Մագիստրոսի պապը) երկու որդիների՝ Վահրամի և Վասակի ժամանակակիցն է՝ «**Հասան իշխան մը՝ նոյն ցեղէն, բայց չէ յայտ իրեն հայրն, իսկ որդիքն յայտնի են, որևէ մեկ այլ ճյուղին հետ խնամիացան, այսինքն՝ Հասանայ թոռն Վասակ՝ Գր. Մագիստրոսի դուստրը կին առած է, և այս երկու մեծ խնամի իշխանք՝ Գրիգոր Մագիստրոս և Վասակ, կըլլան հարք և նախահարք Պահլավունի նորոգեալ կաթողիկոսաց, յորոց մի է և մեր Շնորհալին**»[1] (տե՛ս աղյուսակ երկու): Իր ժամանակի պատմագրության անկատարության պատճառով մեծ գիտնականին փաստորեն հայտնի չէ, որ Վասակից բացի Մագիստրոսին փեսայացել է նաև նրա եղբայր Ապլջահապը, և Շնորհալին իրականում նրա գծով է թոռ և ոչ թե Վասակի: Ավելին, դարձյալ իր ժամանակի պատմագրության անկատարության պատճառով նա Հասանին համարում է Պահլավունյաց մյուս ճյուղից՝ այդպիսի փաստեր ձեռքի տակ չունենալով: Այդ իսկ պատճառով տոհմածառը կազմելիս գիտնականը որոշակիորեն տարակուսում է՝ չկարողանալով ճշտել Ապիրատի հայր Հասանի հոր անունը[2]: Գալով Ապիրատյաններին խնդրին՝ ասենք, որ Ապիրատը «յաննշանից մեծացեալ» **Հայոց իշխանի** պատվանուն ունի: Սրա որդիներ **Ապլջահապին, Վասակին** ու **Սարեին** Հովհաննես արքան (1020-1041) նրանց հոր մահվանից հետո

---

[1] **Ղ. Ալիշան**, Շնորհալի և պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 13:

[2] Նույն տեղում (տե՛ս առանձին տոհմածառը ներդիրով):

տալիս է որոշ կալվածքներ և իշխանական աստիճան[1]: Ամենևին չբացառելով նաև սրանց Պահլավունիական ծագման հավանականությունը՝ մենք կարծում ենք, որ ***միջնադարյան որևէ աղբյուրում հիշյալ անձինք՝ Հասանը, նրա որդի Ապիրատը, սրա որդիները դեռևս Պահլավունի անվանված չեն:*** Մագիստրոսի որդի վեստ Վահրամը, հետագայում Գրիգոր Վկայասեր կաթողիկոսը (1066-1105), նպաստում է, որ Պահլավունիական իշխանական իրավունքները փոխանցվեն իր քույրերի և փեսաների ընտանիքներին, այդ թվում նաև Ապլջահապի և Վասակի երեխաներին, որոնք Ապիրատ Ապիրատյանի թոռներն էին: 11-րդ դարի 2-րդ կեսից նրանք աստիճանաբար կրում են Պահլավունի անվանումը, քանզի Մագիստրոսի ընտանիքը արական գծով սկսում է մարել (տե՛ս աղ. 1-ին):

Եթե մատենագրական աղբյուրներում հարցերն անհամեմատ ավելի բարվոք վիճակում են, ապա վիմագրական հարցերում առկա են որոշ հակասություններ: Թերևս դրանցից էլ ծագել են ինչ-ինչ խնդիրներ, որոնք ավելի շատ անհատական ընկալման, քան իրական վիճակի արդյունք են: Գ. Հովսեփյանն իրավացիորեն գրում է, թե Պահլավունյաց եպիսկոպոսության երկրորդ խոշոր կենտրոնը Վասակ Պահլավունու կալվածքում Բջնիից հետո Կեչառիսն է: Սրբավայրի մասին սկզբնաղբյուրները վանքի հարավային պատի վրայի արձանագրություններից մի քանիսն են՝ գրված 1033[2]-ից մինչև 1053/4 թթ.[3] ընթացքում:

1) 1033 թ. Կեչառիսի Ս. Գրիգոր եկեղեցու առաջին արձանագրությունն այսպիսին է. «ՆՁԲ[4] Թ. ՀԱ(ՅՈՑ). Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԳԱԳԿԱ(Յ) ԵՒ Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Տ(ԵԱՌ)Ն ՍԱՐԳՍԻ ԵՄ՝ ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՌՈՍ, ՈՐԴԻ ՀԱՍԱՆԱ(Յ), ՇԻՆԷՑԻ ԶԵԿԷՂԷՑԻՍ ԻՆՁ Ի ԲԱՐԷԽՈՍՈՒԹ(ԻՒ)Ն ԵՒ ԻՄ ՊԱՏՐՈՆԻՆ ԵՒ ԻՄ ՈՐԴԵԱՑՆ....»[5]:

---

[1] Նույն տեղում: Այլ գիտնականներ Գրիգոր Մագիստրոսի փեսա են համարում եղբայրներից միայն Ապլջահապին:

[2] **Գ. Յովսեփեան**, Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, էջ 158:

[3] Նույն տեղում:

[4] ***ՆՁԲ*** թվականի հարցը որոշակիորեն մոտենում է իր լուծմանը:

[5] **Ն. Ակինեան,** Ներսէս Լամբրոնացի, էջ 374:

Նկ. 1. Կեչառիսի եկեղեցու բարավորը, որի վրա պահպանվել է **Գրիգոր Մագիստրոսի** թողած 1-ին արձանագրությունը. այս և մի քանի այլ կեչառիսյան վիմագրերի լուսանկարներ մեզ է տրամադրել վիմագետ Գագիկ Սարգսյանը

Ամեն ինչ կամ հարցի թնջուկն սկսում է պտտվել բերված թվականի շուրջ: Գ. Հովսեփյանը ենթադրում է, թե ***Կեչառիսը*** սկզբում **հիմնադրվել է 995 թ. և ավարտվել ոչ թե 1033 թ., ինչպես նշված է տեքստում, այլ 1003 թ.:** Եվ դրա հիմնադիրն է համարում **Հասանի որդի Ապիրատին**:

Նախ բացառված չէ, որ մատուռը շատ ավելի հին կառույց էլ լինի: ***Այդ դեպքում, սակայն, հարցը կարող է ճշտված համարվել միայն սրբավայրում մանրախույզ պեղումներ իրականացնելուց հետո, իսկ մինչ այդ խնդրին վերաբերող բոլոր վարկածները ժամանակավորապես դառնում են ոչ արժանահավատ***: Սույն հանգամանքը պետք է ընդունվի ի գիտություն հուշարձանը ուսումնասիրող բոլոր անձանց համար: Մյուս կողմից՝ դժվար թե իր շատ երիտասարդ հասակի պատճառով հիշյալ Ապիրատը 995 թ. կարողանար եկեղեցու պատվիրատուն լինել, ինչպես Գրիգոր Մագիստրոսի պարագայում են պնդում որոշ գիտնականներ՝ պատճառաբանելով նրա իբր շատ երիտասարդ լինելը: Մենք համոզված ենք, որ նրանք (Ապիրատ Ապիրատյանը և Գրիգոր Մագիստրոսը) գրեթե հասակակիցներ են: Կեչառիսյան թնջուկի մասին Գ. Հովսեփյանը առաջարկում է իր լուծումը. «եկեղեցու շինողները կոչում են ***Գրիգոր Մագիստրոս***: .....***Մէկը Հասանայ որդի է, միւսը՝ Վասակայ....Այս վերջին դժվարութիւնը հեշտ է լուծել եւ նոյնացնել Հասա-***

նայ որդի Գրիգորին Հասանայ որդի Ապիրատին, երբ յիշենք, որ Գրիգոր–Ապիրատ երկանունները սովորական էր (են-Ս. Մ.)»[1]: Սակայն բերված փաստերը նման եզրահանգման հիմք չեն տալիս:

Գրվածքում կարևոր են երկու հանգամանքներ. ա) 1033-ը՝ որպես Խաչելության թվական, որը պատահական լինել չի կարող, և բ) պատահական չէ նաև Գագիկ Ա Շահնշահի և Սարգիս Ա հայրապետի հիշատակումը, քանզի եկեղեցու շինարարությունն սկսվել է նրանց օրոք (մինչև 1019 թ.), բայց ավարտվել՝ 1033-ին՝ տևելով մոտավորապես 20-30 տարի: ‹‹***ՆՁԲ***›› թվականն անսխալ է[2] նաև, քանզի **արձանագրության** 4-րդ տողի ‹‹***ՇԻՆԷՑԻ ԶԷԿԷՂԷՑԻՍ ԻՆՁ Ի ԲԱՐԷԽՈՍՈՒԹ(ԻՒ)Ն› ԵՒ ԻՄ ՊԱՏՐՈՆԻՆ ԵՒ ԻՄ ՈՐԴԵԱՑՆ***›› հատվածի ‹‹***ԻՆՁ***›› դերանվան ‹‹***Ձ***›› տառը հար և նման է ‹‹***ՆՁԲ***›› թվականի ‹‹***Ձ***›› տասնավորին (տե՛ս նկ. 1): Մենք կարծում ենք, որ 1033-ը եկեղեցու նավակատիքի թվականն է ոչ թե սկզբնավորման: Կառուցումներն այդ ժամանակներում տասնամյակներ էին ձգվում: Կեչառիսի եկեղեցու շինարարությունն ավելի կարճ տևել չէր կարող, քանզի Վասակ սպարապետն այդ ժամանակ զբաղված էր իր կալվածքի տարբեր մասերում ամրոցների կառուցումներով և եղածների ամրացման աշխատանքներով: ***Գրիգոր և Ապիրատ անունների*** նույնացման փաստ պատմագիտության մեջ չի հանդիպում: Ավագ սերնդի վիմագետ Ա. Մանուչարյանը նշում է, որ «11-րդ դարի սկզբին գործած Գրիգոր–Ապիրատ Մագիստրոս» անունով որևէ մեկն իրեն հայտնի չէ[3]: Ավելին՝ արձանագրության այս և մյուս տեքստերում **Ապիրատ** անունը բնավ վկայակոչված չէ: Եվ եթե անգամ ընդունենք, որ **Գրիգոր Մագիստրոս** անվանվածն այստեղ միջնադարյան մատենագիրը չէ, ապա, միևնույն է, նա նաև Ապիրատը չէ: Ու բնավ էլ բերվածից չենք կարող մակաբերել, «**Թէ Գրիգոր (իմա. Մագիստրոս-Ս.Մ.) եւ**

---

[1] **Գ. Յովսեփեան,** Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, էջ 159-160:

[2] Տե՛ս **Գ. Յովսեփեան,** նշվ. աշխ., էջ 159: Գ. Հովսեփյանի մեկնաբանությունն ու վերծանումը չեն գոհացնում իրենց չպատճառաբանվածության պատճառով:

[3] Տե՛ս **Ա. Մանուչարյան**, Քննություն Հայաստանի 4-11 դարերի շինարարական վավերագրերի, Ե., 1977, էջ 170: Գիտնականը հիշյալ անձին համարում է 12-րդ դարի գործիչ: Նաև՝ **Գ. Սարգսյան,** Գրիգոր-Ապիրատ Հասանյան՝ հիմնադիր Կեչառիսի վանքի /վիմագրական նոր վկայություն/, Հին Հայաստանի մշակույթը, հ. 12, Ե., ԳԱԱ «Գիտություն» հր., 2002, էջ 110:

Ապիրատ մէկ անձնաւորութեան կրած երկանուններ են»[1]: Վկայություն չկա այն մասին, թե Ապիրատը երբևէ Գրիգոր է կոչվել:

Գ. Հովսեփյանը պրագմատիկ անձնավորություն է: Նա ելնում է այն թեզից, որ **Վասակ** և **Հասան** հայրանունները վերաբերում են տարբեր անձնավորությունների: Այդ դեպքում հանդես եկող որդին՝ երկու դեպքում էլ **Գրիգոր Մագիստրոս** անունով, ըստ նրա՝ չի կարող միևնույն անձնավորությունը լինել: Ուստի նա այդ անվան մեջ երկու առանձին անձինք է տեսնում՝ **առաջինը՝ Գրիգոր Մագիստրոս՝ որդի Վասակի, երկրորդը՝ Գրիգոր-(Ապիրատ)՝ որդի Հասանի**: Նա հարկադրված է Ապիրատին նշանավորել, որպեսզի սա հանդես բերվի իբրև ազդեցիկ իշխան: Տվյալ պարագայում այլ կերպ հարցը չէր կարող լուծվել: Ներսես Ակինյանն առաջնորդվում է մի այլ սկզբունքով: Նա որոշակիորեն չի հավատում ու չի վստահում Մ. Խորենացուն[2] և գտնում է, **որ Պահլավունի-Արշակունի ազգաբանությունը Խորենացու հորինածն է 9-րդ դարում:** Պատմահոր այս «ճիգն» արդյոք նպատակային չէ՞, «աղերս մը չունի՞ Պահլաւունեաց հետ»,- մտածում է նա: Նրա կարծիքով՝ Պահլավունիները Պատմահորը «համոզել» են կեղծել իրենց ծագումը՝ հասցնելով այն նախաքրիստոնեական ժամանակները: Այդպիսով՝ նրանք կեղծել են իրենց տոհմի ողջ պատմությունը: 9-րդ դ. տեղափոխելով 5-րդ դ. հեղինակին՝ Ներսես Ակինյանը սկսում է պնդել, թե Լուսավորչի տոհմը կապ չունի Անակ Պարթևի հետ, և թե Մովսեսը (իմա. Մ. Խորենացին- Ս. Մ.) 400 տարի առաջ է տանում «Զ-Թ դարերու պատմական դեպքեր»-ը և այլն: Իհարկե, ինչպես այս, այնպես էլ առաջադրված մյուս վարկածներն անընդունելի են[3]:

---

[1] **Ն. Ակինեան**, Ներսէս Լամբրոնացի, էջ 374:

[2] **Ա. Մուշեղյան**, Մովսես Խորենացու դարը, Ե., ԵՊՀ հր., 2007, էջ 340:

[3] Նույն տեղում, էջ 340: <<Պատմահայր Մովսես Խորենացուն կեղծության մեջ մեղադրելու և 8-9-րդ դդ. հեղինակ հռչակելու համար կեղծ հիմքեր ստեղծելու մեջ ոչ ոք այնքան փութեռանդ չեն եղել, որքան **Գր. Խալաթյանցը**, **Ն. Ակինյանը**», էջ 300: Իհարկե, միանգամայն տեղին է պրոֆ. Ա. Մուշեղյանի դիտողությունը, որ Ն. Ակինյանը որոշ մանրամասներ ճշգրտելուն զուգահեռ մեծապես խճճում է Պահլավունիների տոհմաբանությունը:



Նկ. 2. Արզականի Ս. Ստեփանոս եկեղեցու արձանագրության՝
Գ. Սարգսյանի կազմած գծագիր վիմագիրը

Արզականի Ս. Ստեփանոս եկեղեցու նորահայտ արձանագրությունը (տե՛ս նկ. 2) հայտնում է. «Ն:Ծ (1001) ԹՎԱԿԱՆԻՍ ՀԱՅՐԱՊԵՏՈՒ(ԹԵԱՆ) ՏԵԱՌՆ ՍԱՐԳՍԻ, Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԳԱԳԿԱՅ ԱՇԽԱՐՀԱԿԱԼԻ, ***ԳՐԻԳՈՐ ՀԱՅՈՑ ՄԱԳԻՍՏՌՈՒՍԻ***, ԵՍ՝ ԿՈՐԳ ՔԱՀԱՆԱ, ՇԻՆԵՑԻ ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՈՍ....» և այլն[1]: Մենք հակված ենք կարծելու, որ «Ն:Ծ» թվականը գծագրական տարբերակում կարելի է վերծանել և «Ն:Ճ»-ի[2]: Դա կարող է բավականին մեծ փոփոխություն առաջ բերել[3]: Գրվածքում հիշված է և **Գրիգոր Մագիստրոսի ա**նունը, որն այդ ժամանակ պատանի է եղել ու կարող էր հիշվել որպես կալվածքի տեր: Եվ ինչու չէ, արձանագրությունը, որպես կանոն, ավելի ուշ է գրվում՝ հաշվի առնելով ոչ թե շինության սկզբնավորման, այլ ավարտի հանգամանքը: Չէ՞ որ արձանագրությունը պատրաստի շինության վրա են դնում: Դա թույլ է տալիս

---

[1] Տե՛ս Գ. Սարգսյան, Գրիգոր-Ապիրատ Հասանյան՝ հիմնադիր Կեչառիսի վանքի (վիմագրական նոր վկայություն), Հին Հայաստանի մշակույթը, հ. 12, էջ 110-111:

[2] Նույն տեղում, էջ 111:

[3] **Գր. Գրիգորյան,** Հայկական վիմագրություն (համառոտ ձեռնարկ), Ե., 2000, էջ 80: Այդ դեպքում կունենանք (400+100)=1051 թվական, ինչը կարելի է համարել հետնագիր արձանագրություն: Գր. Գրիգորյանի աշխատության մեջ ասվում է, որ «Երբեմն թվագրությունը կատարվում է ոչ ավանդական-դասական եղանակով....Վայոց ձորի արձանագրություններից մեկը թվագրված է ՆՃԽԹ, այսինքն՝ 500+100+49(=649), փոխանակ գրելու ՈԽԹ (649+551=1200)»: Ուստի 1001 թ. կդառնա 1051 թ. և այդ ժամանակ կհամապատասխանի Գր. Մագիստրոսի գործունեության վերջին տարիներին: Նկատի պետք է ունենալ և այն, որ Գր. Մագիստրոսն ինքն էլ 16 տարեկանում կարող էր կոչվել ‹‹Հայոց Մագիստրոս››:

ենթադրելու, թե Մագիստրոսի անունն այստեղ գրվել է կառուցման սկսելու թվականից 5-10 կամ ավելի տարիներ անց: Այս և մի քանի այլ վիմագրերում կազմողները գիտակցաբար շեշտում են Գրիգորի՝ **Հայոց Մագիստ(ռ)ոս** լինելու կամ այդ աստիճանը ունենալու հանգամանքը: Դա ինքնին ենթադրում է, որ Հայոց Մագիստ(ռ)ոսի **զինվորական** աստիճանը և իբրև բյուզանդական պաշտոնյա **մագիստ/ռ/ոսական** աստիճանը տարբեր բաներ են: Ըստ այդմ, անկախ Գրիգոր Բջնեցու՝ 1046 (47) թ. ստացած բյուզանդական մագիստ(ռ)ոսական-կուսակալական պաշտոնից նա **Հայոց Մագիստրոսի** աստիճան արդեն իսկ ունեցել է նախապես՝ որպես զինվորական: Անշուշտ, **Հայոց Մագիստրոսի** աստիճանը դարձյալ բյուզանդական արքունիքի մենաշնորհն է եղել, և այն ունեցողները լիազորված են օգտագործել դա միայն հայկական զորագնդերի նկատմամբ: Գուցե և Բագրատունյաց թագավորության զինվորական աստիճան լինի: Որոշ դեպքում իշխանական աստիճանի շնորհումը հասակի հետ կապված հարց չէ: Սույն միտքը հաստատվում է Գրիգոր Մագիստր(ռ)ոսի ՁԴ թվակիր թղթի հետևյալ ուշագրավ փաստով: Թուղթն ակրոստիքոս է, ու տների գլխատառերը հոդում են **«Վահրամ»,** իսկ վերնագիրն է՝ «Առ ***վեստն Վահրամ***, որդին իւր»: Ինչպես տեսնում ենք՝ **վեստի** իշխանական տիտղոսը տրված է մի պատանու կամ դեռահասի՝ իր որդի Վահրամին: Հայրը նրան կոչում է նաև «***մանուկ*** ….»[1], ինչն այստեղ վկայում է, որ իշխանի որդին մոտ 10-15 տարեկան մի պատանի է: Բայց հենց այդ հասակում էլ նա **վեստ**-ի իշխանական տիտղոս կրում: Ուրեմն այս դեպքում **վեստ**-ի[2], իսկ նախորդ դեպքում **Հայոց Մագիստռոս**-ի աստիճանները հաճախ նաև իշխանական-ազնվականական են և կարող են փոխանցվել[3]: ՈՒրեմն **Գրիգոր Մագիստր(ռ)ոսն** այն ունեցել և կրել է

---

[1] Գրիգոր Մագիստրոսի Թղթերը (առաջ. և ծանոթ. Կ. Կոստանեանցի), էջ 235:

[2] Նույն տեղում:

[3] Ցավոք, մեզանում հայոց իշխանական և զինվորական անվանումների մասին ուսումնասիրություններ չկան: Մեզ ծանոթ է Կարինե Ոսկանյանի ուսումնասիրությունն այս մասին, բայց այն խորացման ու լրամշակման կարիք ունի. տե՛ս **Կ. Ոսկանյան**, Հայոց բանակը բագրատունյաց շրջանում (9-11 դդ.), Ե., 2010, 189 էջ: Բերում ենք նաև բյուզանդական իշխանական աստիճանակարգն ըստ Լեոյի՝ 1. **կեսար**, 2. **սվեստ**, 3.**նովոլեսիմուս**, 4. **կյուրապաղատ**, 5. **պրոտոպրոդորոս**, 6. **պրոեդորոս**, 7. **մագիստրոս**, 8. **վեստարքոս**, 9.**վեստ**, 10. **անթիպատ**, 11. **պատրիկ**, 12. **պրոտոսպթարիոս**,

մինչև բյուզանդական պաշտոնյա լինելը:

Այստեղ ևս **Գրիգոր Հայոց Մագիստրոսի** անվան հիշատակությունը շատերին մղում է նրան Ա**պիրատի** հետ նույնացնելու: Այս մասին Գ. Սարգսյանը գրում է. «Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Գրիգոր Մագիստր(ռ)ոսի (Ս. Մ.) հիշատակությունը: Նկատի ունենալով թվագրումը Սարգիս Սևանցու և Գագիկ Ա-ի անվանց վկայությունները՝ այս Գրիգորը չէր կարող լինել Գրիգոր Բջնեցի Վասակյանը ոչ միայն տարիքի, այլև **մագիստրոս** հորջորջման առումով: **Հայոց պատմության մեջ 10-րդի վերջին և 11-ի սկզբում հիշված է ևս մեկ Գրիգոր կամ Ապիրատ (թերևս՝ Գրիգոր-Ապիրատ) Մագիստրոս, նույնպես Պահլավունի, սակայն որդի Հասանի**»[1]: Խոսքը փաստորեն Ապիրատի մասին է: Ինչպե՞ս է, սակայն, Գրիգորը դառնում Գրիգոր-Ապիրատ, մագիստրոսի աստիճան ու մականուն ձեռք բերում և դառնում Պահլավունի: Չէ՞ որ Ապիրատը հայտնի չէ **Մագիստրոս** մականունով և մագիստրոսական աստիճանով, այլ հայտնի է որպես **Հայոց մեծ իշխան**, իսկ արձանագրությունում հիշված Գրիգորը Արզականի Կորգ Քահանայի մոտ՝ **Գրիգոր Հայոց Մագիստրոս** պատվանունով է հանդես գալիս և չի նույնանում Ապիրատի հետ: Մենք կարծում ենք, որ մագիստրոսական զինվորական (նաև իշխանական) աստիճան սպարապետական տան ներկայացուցիչները, իբրև բարձրաստիճան զինվորական-հրամանատարներ, երբեմն ունեցել են բացառության կարգով:

Գրիգոր Մագիստր(ռ)ոսի և **Ապիրատ Ապիրատյան** (Հասանյան) ավագի հասակակցության հարցը, որ երբեմն շահարկվում է, կարող է ամեն ինչ իր տեղը դնել: Ապիրատը դավադրաբար սպանվում է Դվինի Ապուսվար ամիրայի ձեռքով 1021 թ.: Այդ նույն թվականին Նիգ գավառում հերոսաբար նահատակվում են Վասակ իշխանաց իշխանը և նրա ընկերները[2]: Հայրական կալվածքի պաշտպանությունն ու կառավարումն անցնում է իշխանի որդուն՝ Գրիգոր Մագիստր(ռ)ոսին: Ապիրատի երեք մանկահասակ որդիներին՝ Ապլջահապին, Վասակին, Սարեին, Դվինից

---

13. **սպաթարիո-կանդիդատ**, 14. **սպաթարիոս**, 15. **կանդիդատ:** Տե՛ս **Լեո**, Երկերի ժողովածու, հ. 2, Ե., Հայաստան հր., 1968, էջ 610:

[1] Գ. Սարգսյան, Գրիգոր-Ապիրատ Հասանյան՝ հիմնադիր Կեչառիսի վանքի (վիմագրական նոր վկայություն), Հին Հայաստանի մշակույթը, հ. 12, էջ 110-111:

[2] **Մ. Ուռհայեցի,** Ժամանակագրություն, էջ 16, 17: Նաև՝ **Վ. Վարդանյան**, Պահլավունիները հայոց պետականության և հոգևոր անաղարտության պահապաններ, էջ 25-27:

բերում են Անի: Առաջին երկուսը մեծանալով դառնում են Գրիգոր Մագիստր/ռ/ոսի փեսաները[1]: Ինչպես պատանիները, այնպես էլ օրիորդները հասակակիցներ են եղել, և տարբերությունը 2-3 տարի կարող է կազմել: Դա նշանակում է, որ հասակակիցներ են եղել նաև Գրիգոր Մագիստր/ռ/ոսն ու Ապիրատ իշխանը՝ երիտասարդ-երիտասարդուհիների ծնողները: Հետևաբար Ապիրատ իշխանը մոտավորապես 35-40 տարեկան անձնավորություն էր մահվան ժամանակ՝ 1021 թ. (ծննդյան թիվը մոտ 980-985), իսկ Գրիգորը՝ մոտ 35 տարեկան (ծննդյան թիվը մոտ 985-990): Նրանք հասակակիցներ են չնչին տարբերությամբ: Ապիրատի՝ իբր տարիքով ավելի մեծ լինելու պատճառով 995 թ. դեռևս չհաստատված վաղ կառույցն անվերապահորեն նրան է վերագրվում[2], մինչդեռ **Մագիստրոսը** ևս կարող էր դրա հիմնադիրը լինել: Գ. Հովսեփյանը գրում է. «Գրիգոր-Ապիրատի շինած եկեղեցուց ոչինչ չէ մնացել»[3]: Բայց մենք կարծում ենք, որ ***երկուսն էլ հավասարապես կարող են լինել 995 թ. կառույցի հեղինակը, և նախապատվությունը մեկին տալը բնավ էլ ճիշտ չէ:*** Իսկ թե Ապիրատյան (Հասանյան) Պահլավունիները 10-րդ դարի վերջում և 11-րդ դարի մինչև 30-40-ական թվականները Կեչառիսն ու շրջակա տարածքներն ունեցել են որպես կալվածք, մի նոր փաստ է: Այսպես. ‹‹**Կեչառիսի վանքի հիմնադիրը Պահլավունեաց Գրիգոր-Ապիրատ Մագիստրոսն է, որդի Հասանի, որը 995-1003 թթ. կառուցել է Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին**,- գրում է Գ. Սարգսյանը:- **10-րդ դարի վերջից մինչև 11-րդ դ. 30-40-ական թվականները այս տարածքները պատկանել են Պահլավունեաց Ապիրատյան ճյուղին**››[4]: Այս պնդումով ստացվում է, որ 1) Ապիրատյան Պահլավունիները նախորդել են Վասակ սպարապետին ու նրա որդուն և 2) Նախապես՝ մինչև 30-40-ական թվականները, սկզբում հայրը, այնուհետև Գրիգոր Մագիստրոսը կապ չեն ունեցել իրենց պատկանող կալվածքների հետ: Ո՞ւմ հրամանով կամ ո՞ւմ նվիրատվությունների և կամ ո՞ր գնման արդյունքում Հասանը

---

[1] Պատմագետ Վր. Վարդանյանը գտնում է, որ Ապլջահապը չի փեսայացել Գրիգոր Մագիստրոսին, այլ միայն Վասակը: Տե՛ս **Վր. Վարդանյան**, Պահլավունիները Հայոց պետականության և հոգևոր անաղարտության պահապաններ, էջ 115-116, 206 (տե՛ս հեղինակի կազմած աղյուսակը):

[2] Տե՛ս **Կ. Մաթևոսյան,** Անի-Շիրակի պատմության էջեր, էջ 139:

[3] **Գ. Յովսեփեան**, Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, էջ 160:

[4] **Գ. Սարգսյան**, Գրիգոր-Ապիրատ Հասանյան՝ հիմնադիր Կեչառիսի վանքի (վիմագրական նոր վկայություն)/, Հին Հայաստանի մշակույթը, հ. 12, էջ 112:

կամ Ապիրատը ձեռք բերեցին Կեչառիսը: Իրականում այդպիսի տեղեկություններ չկան ո՛չ արձանագրություններում, ո՛չ պատմագրության մեջ: Հակառակ այս պնդման հիշենք թեկուզ այն անհերքելի փաստը, որ ըստ Մ. Ուռհայեցու՝ Վասակ սպարապետը 1021 թ. Բջնու իր ամրոցից է մեկնել Սերկևլո լեռան ստորոտ և Նիգ գավառում տվել ճակատամարտ դելմիկներ կոչված ցեղերի դեմ ու զոհվել[1]: Պատմական սկզբնաղբյուրներն ու ուշ շրջանի հետազոտությունները բնավ չեն հաստատում, թե Կեչառիսը և շրջակա տարածքները պատկանել են մեկ ուրիշ անձնավորության և ոչ թե Վասակ սպարապետին[2]:

Եթե Ապիրատյանները Կեչառիսի թեկուզ որոշ կալվածքների սեփականատերերը լինեին կամ հետագայում գնածներ, ապա դա չէր կարող չարտացոլվել հենց արձանագրություններում: Չէ՞ որ առկա գրվածքներում սրբավայրը հարկերից ազատելու, նորակազմ թեմին նվիրելու և նմանատիպ գործերի ու գործարքների մասին են, ուր գլխավոր անձն այս ժամանակաշրջանում տեղում հանդես է գալիս **Գրիգոր Մագիստռոսը, ո**րի գործունեությամբ սկսվում է Կեչառիսի մոտ կեսդարյա վերելքի ու ծաղկման շրջանը, որը գիտամշակութային առումով հասնում է մինչև 14-րդ դ. սկիզբը, մինչև Խաչ. Կեչառեցի: Այդ ամենում **Ապիրատը** ներկա չէ: Նույնքան խորհրդավոր է նրա անհայտ անցյալը: Վարդան պատմիչը նշում է, որ **աննշանից մեծացյալ** հասել է իշխանական բարձր դիրքի: Ամենայն հավանականությամբ մտել է զինվորական ծառայության ու այդ ասպարեզում առաջադիմել: Նախապես եղել է արքաեղբայր Աշոտ Բագրատունու (Գագիկ 2-րդի հոր) վասալը և հովանավորյալը: Աշոտի շնորհիվ է ստացել ***հայոց իշխանի*** պատիվը: Բայց Հովհաննես արքային ազատելով մահից՝ ինքն է հայտնվել թակարդում և, ի վերջո, զոհվել: Ինչ վերաբերում է **Գրիգոր Մագիստ(ռ)րոսին,** ապա նա իր մագիստրոսական կոչումը կամ աստիճանը ***հայոց մագիստրոս*** անվանումով վաղուց է ունեցել որպես սպարապետական տան ներկայացուցիչ[3]:

---

[1] **Մ. Ուռհայեցի**, Ժամանակագրություն, էջ 16-19:

[2] **Գրիգոր Մագիստրոսի Թղթերը** (առաջ. և ծանոթ. Կ. Կոստանեանցի), Ալեսանդրապոլ, 1910, էջ ԺԷ, ԻԶ-ԻԹ : Նաև՝ **Վր. Վարդանյան**, Պահլավունիները Հայոց պետականության և հոգևոր անաղարտության պահապաններ, Ե., 2008, էջ 24-28, 68:

[3] **Կորգ քահանայի** արձանագրությունը Արզականում՝ ***ԳՐԻԳՈՐ ՀԱՅՈՑ ՄԱԳԻՍՏՌՈՒՍ*** ձևով հաստատում է 11-րդ դ. սկզբում այդ զինաստիճանի կիրառության տարածվածության մասին:

Ավելին՝ այս մասին **Կորգ քահանայից** բացի գրում է **Գրիգոր Մագիստր(ռ)ոսի** դուստրերից մեկը (1042 թ. Տեկորի արձ.), որ նվաստ Վեստի կինն էր: Այսպես. «Ես՝ **տիկ(ն)աց տիկին՝ դուստր Քրգորոյ Մագիստռոսին եւ ամուսին Սարգսի** Արեւելից **Վեստի**....»[1] փաստը ներկայացվում է հետևյալ կերպ: «Ուսումնասիրողները (նշվում է **Լեոյի** և **Կ. Յուզբաշյանի** անունները- Ս. Մ.) հաճախ նրա հորը թյուրիմացաբար նույնացրել են Գրիգոր Մագիստրոս Պահլավունու (Բջնեցու) հետ, մինչդեռ Պահլավունի իշխանը մագիստրոսի պատիվ ստացել է ավելի ուշ՝ 1045-ին»[2]: Պատմագրության մեջ, սակայն, Ապիրատը երեք որդի է ունեցել (**Ապլջահապ, Վասակ, Սարե**)[3] և դուստր չի ունեցել: Բնականաբար մենք կարծում ենք, որ Վեստի կինը Գրիգոր Մագիստրոս Պահլավունու (Բջնեցու) դուստրն է: Եվ ինչպես Կորգ քահանան, այնպես էլ Մագիստրոս Պահլավունու (Բջնեցու) դուստրը հաստատում են նրա՝ **հայոց մագիստրոսության** պատիվը նախապես ունենալը և Ապիրատի՝ այս ամենի հետ կապ չունենալը:

Նույն կերպ 14-րդ դ. ապրած **Նաթանայել Հավուցթառեցու** հավելումները **Սամուել Անեցու «Ժամանակագրության»** գրչագիր մի ձեռագրի մեջ ոմանց կողմից ընդունվում է որպես անվիճարկելի ճշմարտություն: Սակայն հակառակ դրան՝ չի ընդունվում 15-րդ դ. գործիչ **Մանուել Բջնեցու տեսակետը**, ըստ որի սրբավայր Ս. Խաչի բերողը և իր կառուցած Ամենափրկիչ վանքում տեղադրողը համարվում է **Գրիգոր Մագիստր(ռ)ոսը**: Դա այս դեպքում Ապիրատի «դիրքերի թուլացում»[4] պիտի նշանակեր: Մինչդեռ շատ գիտնականներ գանգատվում են այդ բնագրի աղճատումներից և պահանջ դնում այն մաքրել դրանցից: Որոշ գիտնականներ փոխանակ Անեցու անթերի բնագրով առաջնորդվելու, վկայակոչում են ուշ շրջանում գրված ընդմիջարկումներ, որ տվյալ դեպքում ուղղակի աղճատման դրսևորում են, ինչը, այո՛, մեզ չի գոհացնում որպես անարժանահավատ սկզբնաղբյուր: Ընդհակառակը՝ դա մի ինքնահնար հավելում է Սամուելի երկում[5]: Իսկ հիշյալ **Գրիգոր Հայոց Մագիստռոսը** հենց սկզբից չի նույնանում և չի էլ կարող նույնանալ **Ապիրատյան (Հասանյան) Ապիրա-**

---

[1] **Ղ. Ալիշան,** Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 135:

[2] **Կ. Մաթևոսյան,** Անի-Շիրակի պատմության էջեր, էջ 118 -119:

[3] **Մ. Ուռհայեցի**, Ժամանակագրություն, էջ 16, 17:

[4] Տե՛ս **Կ. Մաթևոսյան**, Անի-Շիրակի պատմության էջեր, էջ 110-111:

[5] Տե՛ս **Լ. Տեր-Պետրոսյան**, Խաչակիրները և հայերը, հ. Ա, Ե., 2005, էջ 471-472:

տի անվան հետ. նրանք նույն անձնավորությունը չեն:

«**ՆՁԲ**» (1033) թվականը Ս. Գրիգոր Լուսավորչի եկեղեցու շինարարության ավարտի ու օծման թվականն է: Դա Տիրոջ Խաչելության և Համբարձման 1000-ամյա խորհուրդն ունի իրենում, հետևաբար կառուցողներն անպայման կարևորել են հենց այդ հանգամանքը: Դա համաքրիստոնեական նշանակություն ունեցող իրադարձության շեշտումն էր, խիստ արժևորումը, քանզի հենց այդ օրերին Հովհաննես Կոզեռնը հավաքված հայ իշխանների ու մասնավորաբար Վասակի որդի Գրիգոր Մագիստր(ռ)ոսի հետ խոսում էր նեռի արձակման ու չարագույժ երկնային նշանների մասին[1]: «**Ահա այսօր լրացան հազար ամ չարչարանաց խաչելութեան և արձակմանն Բելիարայ**.....Եւ ահա յայսմ ամի լուսաւորքդ խաւարեցան»[2] սրբի ասածը մեջ է բերում Մ. Ուռհայեցին: Դարի մեծերը՝ պայծառատեսներ ու գիտնականներ, խոսում էին աշխարհվերջյան արհավիրքների մասին, ինչից սարսափում էին ժամանակակիցները[3]: Յուրաքանչյուր քրիստոնյա փորձում էր աստվածահաճո գործ կատարել: Իսկ Գրիգոր Մագիստր/ռ/ոսը դրանց մեջ առաջիններից մեկն էր:



Նկ.3. Կեչառիսի համալիրի հատակագիծը (1-Ս. Գրիգոր Լուսավորիչ եկ., 2-փոքրիկ մատուռ, 3-Ս. Նշան, Ս. Գրիգոր եկ. գավիթը)

Կեչառիսի վանքի 2-րդ ճակատային արձանագրությունը գրված է

---

[1] **Մ. Ուռհայեցի**, Ժամանակագրություն, էջ 75-85: Նաև՝ **Ս. Մխիթարյան**, Գր. Մագիստրոսի կյանքը և գեղարվեստական ժառանգությունը, էջ 60-63:

[2] Նույն տեղում, էջ 76, 77:

[3] Տե՛ս **Լեո**, Երկերի ժողովածու, հ. 2, Ե., ՀՍՍՀ ԳԱ հր., 1967, էջ 609-610:

1051 թ.: Սա թերևս կարևորագույն գրություններից մեկն է: Այն այժմ վերականգնված շինության վրա չկա: Գ. Հովսեփյանն այս մասին ասում է. ‹‹Մի երրորդ գրության պատճէն բերում է Ալիշան՝ առնելով այն Սէն Մարտէնից, որ իտալերէն թարգմանութեամբ գտնուել էր Հռոմի Propaganda fide-ի դիւանում.... Այս գրութիւնն արդէն Գրիգոր Մագիստրոսի բերանից է››, և բերվում է տեքստը՝ Ղ. Ալիշանի թարգմանությամբ[1].

«Ի Շ. ԹՈՒԱԿԱՆԻՍ, Ի ԺԱՄԱՆԱԿՍ ԿՈՍՏԱՆՏԻՆ ՄՈՆՈՄԱԽԻ ԹԱԳԱՒՈՐԻ՝ ՀԱՅՈՑ (Տ!) ԴՈՒՔՍՍ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ, ԳԱՒԱՌԻՍ ԾԱՂԿՆՈՒՑ ԵՍ <u>ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ՝ ՈՐԴԻ ՎԱՍԱԿԱՅ</u> ՀՐՈՎԱՐՏԱԿԱՒ ԵՒ ՀՐԱՄԱՆԱՒ ՎԵՐՈՅԱՍԱՑԵԱԼ ԹԱԳԱՒՈՐԻՍ՝ ՀԻՄՆԱԴՐԵԱԼ ՇԻՆԵՑԻ ԶԵԿԵՂԵՑԻՍ Ի ՏԵՂԻՈՋՍ, ՈՐ ԿՈՉԻ ԿԵՉԱՌՈՒՍ, Ի ՆԱԽԱՍԱՑԵԱԼ ԳԱՒԱՌԻՍ ԾԱՂԿՆՈՒՑ ՀԱՆԴԵՐՁ ՄԱՏՐԱՄԲ. ԵՒ ՆՈՒԻՐԵՑԻ ԶՏԱՃԱՐՍ ԵՒ ԶԵԿԵՂԵՑԻՍ ՅԱՆՈՒՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ՄԵՐՈՅ. ԵՒ ԶԱՐԴԱՐԵՑԻ ԶՍԱ ՍՊԱՍՈՒՔ, ԱՐԾԱԹԵՂԻՆՕՔ ԵՒ ՈՍԿԵՂԻՆՕՔ.....ՈՐՊԷՍ ՎԱՅԵԼ Է ՏԱՃԱՐԻՍ: ԴԱՐՁԵԱԼ ԵՏՈՒ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ ԳԵՕՂՍ ԵՒ ԱՅԳԻ ՄԻ:

ԵՒ ՄԵՔ ՇՆՈՐՀԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒՆՔՍ ԲՋՆՈՅ <u>ՎԱՆԱԿԱՆ ԵՒ ՀԱՄԱՎԱՐ</u> ՍԱՀՄԱՆԵՑԱՔ Ի ԹԵՄ ԵՒ ԿԱԼՈՒԱԾ ՎԵՐՈԳՐԵԱԼ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ ԳԵՕՂՍ ՔՍԱՆ ԵՒ ՀԻՆԳ ԵՒ ՔԱՂԱՔ ՄԻ՛ ՈՐՔ ԵՆ ԲՈՒԺԱՆ, ՇՈԿԱԹՆ՛....ԵՒ ՀԱՍՏԱՏԵՑԱՔ ԶՎՃԻՌՍ ՄԵՐՈՎ ԶԵՌԱԳՐՈՎՍ ԵՒ ԿՆՔՈՎՍ››[2]:

Տեքստում պարզորեն նշված է **Գրիգոր Մագիստրոս Պահլավունու՝** Վասակի որդու անունը: Նա հանդես է գալիս ***ՀԱՅՈՑ ԴՈՒՔՍՍ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ, ...ԵՍ՝ <u>ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ՝ ՈՐԴԻ ՎԱՍԱԿԱՅ</u>*** անունով, որը 11-րդ դարի մատենագիրը, զորահրամանատարն ու իշխանն է: Նրան ոչ մի կերպ չի կարելի շփոթել ուրիշ մեկի հետ: Նա իր մասին հըստակորեն գրում է՝ «**հիմնադրեալ շինեցի զեկեղեցիս՝ .... հանդերձ մատրամբ և նուիրեցի զտաճարս և եկեղեցիս յանուն սրբոյն Գրիգոր Լուսաւորչի մերոյ**»: Հետո արդեն այն թանկագին նվերներով և կալվածքներով է ‹‹զարդարել››՝ մի քաղաք և քսանհինգ գյուղ նվիրելով թեմական կենտրոնին, իսկ **զտաճարս և եկեղեցիս** ....հ**անդերձ մատ-**

---

[1] **Ղ. Ալիշան,** Այրարատ, էջ 260: Տե՛ս նաև՝ **Գ. Յովսեփեան**, Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, էջ 158:

[2] Նույն տեղում:

ռամբ՝ այսինքն՝ ամբողջը տրամադրվել է թեմական առաջնորդարանին**:** Վասակի որդի Գրիգոր Մագիստրոսը գրվածքում հանդես է գալիս որպես Վասպուրականի դուքս, ինչը նա անում է նաև 3-րդ, այն է՝ հաջորդ արձանագրության մեջ:

Միանգամայն պարզ է դառնում, որ Գրիգոր Մագիստրոսը երկու գրվածքներում էլ նույն անձն է, բայց մի դեպքում՝ **որդի Վասակի**, մի դեպքում՝ **որդի Հասանի**: Բյուզանդական կայսր Մոնոմախը հավասարապես հանդես է գալիս երկու վիմագրերում էլ: Հենց նրա հրամանով է, որ մի դեպքում տեղանքում ինչ-ինչ կառուցումներ է արել Վասակի որդի Գրիգոր Մագիստրոսը: Մյուս դեպքում էլ նույն ինքնակալից ստացած կնիք-մատանին է բերել սրբավայր, խնդրում է աղոթել վերջինիս համար, իսկ իր հոր՝ Հասանի համար հիշատակի օր է սահմանում: Ակնհայտ է դառնում, ու շատ պարզ տեսնում ենք, որ կայսեր մոտ երկու դեպքում էլ ելումուտ է արել միևնույն մարդը, այսինքն՝ Վասակի որդի Գրիգոր Մագիստրոսը: Սա մի զորավոր կռվան է ինչպես երկու արձանագրությունների իմաստային ընդհանրության, այնպես էլ հիշատակված պատմական միևնույն անձի՝ երկու տեղում ծավալած գործունեության մասին:

Բառացի գրված է, որ կառուցել է եկեղեցի **գր. Լուսավորչի անունով, բայց նաև՝ մատուռ, ի**նչպես և **զտաճարս և եկեղեցիս,** ինչն ամենայն հավանականությամբ վերաբերում է նաև **Ս. Նշանին**: Իսկ նորօրյա գիտնականը գրում է. «Փաստաթղթում Գրիգոր Մագիստրոս Պահլավունին նշում է իր կառուցած եկեղեցու մասին՝ ***ՀԻՄՆԱԴՐԵԱԼ ՇԻՆԵՑԻ ՁԵԿԵՂԵՑԻՍ Ի ՏԵՂԻՈՋՍ ՈՐ ԿՈՉԻ ԿԵՉԱՌՈՒՍ (ընդգծ.- Ս. Մ.),*** որն ուսումնասիրողները նույնացնում են **Ս. Գրիգոր եկեղեցու հարևանությամբ կառուցված Ս. Նշան եկեղեցու հետ**»[1]: Այսինքն՝ ստացվում է, որ Գրիգոր Մագիստրոսը կառուցել է **Ս. Նշան եկեղեցին,** ինչն իհարկե այդպես է, բայց նա այստեղ ուղղակի անվանաբար շեշտում է իր կառուցած հատկապես **Ս. Գրիգոր Լուսավորիչ հոյաշեն եկեղեցու ա**նունը**:** Շրջանցվել

---

[1] **Կ. Մաթևոսյան,** Հազարամյա Կեչառիսի հիմնադրման պատմությունից, էջ 87: Նաև՝ տե՛ս **Վար. Հարությունյան,** Հայկական ճարտարապետության պատմություն, Ե., Լույս հր., 1992, էջ 310: Գիտնականը համոզված է, որ Ս. Գրիգոր եկեղեցին կառուցվել է Գրիգոր Մագիստրոսի ձեռքով 1003 թ., իսկ Ս. Նշանը՝ 12-րդ դարում: Այս աղբյուրը նշում է նաև 1827 թ. ավերիչ երկրաշարժի մասին, որով սրբավայրը համարյա ավերակների է վերածվել:

է գրության ամենակարևոր մասը, այն է՝ ***ՆՈՒՐԻԵՑԻ ՀՏԱՃԱՐՍ ԵՒ ՀԵԿԵՂԵՑԻՍ ՅԱՆՈՒՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ՄԵՐՈՅ:*** Այստեղի մինչև 1053 թ. կառուցված բոլոր կարևոր շինությունները նա իրեն է վերագրում, հանդես գալիս իբրև **արձանագրությունների** հեղինակ շինությունների կառուցող: Մենք ասելիքը տարածում ենք նաև առաջին արձանագրության վրա:

Եթե դրանք իրենից առաջ իսկապես գոյություն ունեին և այդ ու հետագա գրվածքները հակասում էին ճշմարտությանը, ապա ինչպե՞ս Գրիգոր Մագիստրոսը՝ պատկառելի իշխանը, պատասխան պիտի տար իր թույլ տված բացահայտ կեղծումների համար: Եվ ինչպե՞ս Բջնո եպիսկոպոսներ Վանականը և Համավարը, որ Կեչառիսը դարձնում են առանձին թեմ՝ մեկ քաղաքով և քսանհինգ գյուղով, պիտի իրենց կնիքով հաստատեին նախկին և այս կեղծարարությունները: Ամեն ինչից զատ արձանագրություններում օգտագործված են անեծքի բանաձևեր, և ոչ մի ազնվական անձ, որ պատվի տարրական գիտակցություն ուներ, կեղծումների երբեք չէր գնա: Դա բացառված է:

1053 թ. Կեչառիսի վանքի 3-րդ՝ ճակատային խոշոր արձանագրությունը հետևյալն է. «Ի ՀԻՆԳՀԱՐԻՒՐԵՐՐՈՐԴԻ[1] ԱՄԻ ԹՈՒԱԿԱՆՈՒԹԵԱՆՍ ԹՈՐԳՈՄԵԱՆ Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՆ ՍՈՒՐԲ ԵՒ ԻՆՔՆԱԿԱԼ ԹԱԳԱՒՈՐԻՆ Կոստանդեայ Մաւնումախին ԲԵՐԱՒ ՈՍԿԻ ՄԱՏԱՆԻՍ, ՀՈՐ ՀՀԱՒՐԻՆ ԵՒ ԱՌԱՔԻՆՈՅՆ, ԲԱՐԵՊԱՇՏԻՆ ԳՐԻԳՈՐՈՅ ՄԱԳԻՍՏՌՈՍԻՆ, ԿԻՏԱՒՆԻՆ ԵՒ ԴՈՒԿԻՆ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԵՒ ՏԱՐԱՒՆՈՅ ԱՐՇԱԿՈՒՆՈՅՆ ԵՒ ՀԱՅԿԱՁՆՈՅՆ, ՄԵԾԱՒ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ ԱՁԱՏԵԱԼ ԷՐ ՁՄԵԾ ԵՒ ՀՌՉԱԿԱՒՈՐ ԵԿԵՂԵՑԻՔՍ ԻՒՐ ԵՒ ՈՉ ԱՅԼ ԻՆՉ ՀԱՅՑԷ՝ ԲԱՅՑ ՄԻԱՅՆ ԱՂԱՒԹՍ ԱՌՆԵԼ ՍՈՒՐԲ ԵՒ ԻՆՔՆԱԿԱԼ ԹԱԳԱՒՈՐԻՆ ԿՈՍՏԱՆԴԵԱՅ ....»[2] և այլն:

---

[1] Գ. Հովսեփյանը գրության թվականը՝ **Ի ՀԻՆԳՀԱՐԻՒՐԵՐՐՈՐԴԻ (500+551=1051 թ.)** ձևը վերծանում է նոր ընթերցմամբ՝ տրոհելով այն Ի ՀԻՆԳՀԱՐԻՒՐ ԵՐՐՈՐԴԻ (**500+553=1053)4(թ.**): Տե՛ս **Գ. Յովսեփեան,** Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց մէջ, էջ 161: Մենք պայմանականորեն այս գրության թվականը ընդունում ենք 1053-ը՝ ըստ Գ. Հովսեփյանի:

[2] **Ն. Ակինեան**, Ներսէս Լամբրոնացի, էջ 375:

Նկ.4. Կեչառիսի եկեղեցու 3-րդ արձանագրության սկզբնամասը, որ թողել է Գրիգոր Մագիստրոսը (Գ. Սարգսյանի հավաքածու)

Ուշագրավ է այն, որ խոսվում է Մագիստրոսին պատկանող եկեղեցիների մասին՝ «***Զմեծ եւ հռչակաւոր եկեղեցիքս իւր***»: Դա նախ և առաջ Կեչառիսի մի քանի շինություններն են: Չէ՞ որ շինության ճակատին դրոշմված գլխավոր արձանագրությունը պիտի զերծ լիներ կեղծիքից, երկիմաստություններից և թերություններից: Բնականաբար նախկին հսկայածավալ կալվածքի (Ծաղկունիք, Վարաժնունյաց մի մասը, Կայյոն և Կայծոն բերդեր, Կոտայք, Ազատի հովիտ[1] և այլն) տերը[2], որն այդժամ կուսակալ էր, կարող էր մինչև 1047 թ. հարկադրաբար Բյուզանդիային հանձնած հայրենի տարածքում իրեն ազատ զգալ: Եվ նա իրեն անկաշկանդ է զգացել: Ավելին, նա ժամանակ առ ժամանակ այցելել է հարազատների շիրիմներին, եղել հայրենական օջախում, մանկության սիրելի վայրերում: Փորձառու մարդն անմիջապես կնկատի նմանությունը Մեծ իշխանի արձանագրությունների հռետորական ոճի և նրա Թղթոց ժողովածուի գրությունների միջև: Այսպես. «Պատասխանի թղթոյն կաթուղիկոսին Ասորւոց ի ժամանակին, յորժամ էր դուքս ի Վասպուրական և ի Տարօն.....զոր նորա գրեալ թուղթ ի **Գրիգոր Մագիստրոս յԱրշակունին**»[3]: Վիմագրում ևս տեսնում ենք Մագիստրոսի բարդա-

---

[1] Տե՛ս Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, էջ ԻԷ-ԻԸ:

[2] Տե՛ս **Ս. Մխիթարյան,** Գր. Մագիստրոսի կյանքը և գեղարվեստական ժառանգությունը, Ե., 2001, էջ 9:

[3] Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, էջ 148:

գիր ոճը, որ անշփոթելի է ու շատ նման Թղթի վերնագրում օգտագործված ոճին: Անկասկած է, որ բերված նյութերը մագիստրոսյան են: Վերջապես ով է սա՝ ***ՀԶՈՐ ԵՒ ԱՌԱՔԻՆԻ, ԲԱՐԵՊԱՇՏ*** **ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՌՈՍԸ, ԿԻՏՈՆԸ ԵՒ ԴՈՒԿԸ, ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԵՒ ՏԱՐՈՆԻ տերը, ԱՐՇԱԿՈՒՆԻՆ ԵՒ ՀԱՅԿԱԶՈՒՆԸ**: Մի՞թե բերված փաստերը խոսում են ոչ թե մատենագիր և մեծ հայրենասեր **Գրիգոր Մագիստրոս Պահլավունու (Արշակունու)**, այլ Ապիրատի մասին: **Նա Մոնոմախից կնիք-մատանի է ստացել կալվածքների համար՝ դրանք հարկերից ազատելու նպատակով**[1]: Մյուս կողմից՝ գրվածքը փորագրվել է Ապիրատ Ապիրատյանի (Հասանյանի) մահից 32-33 տարի անց, և դրա պատվիրատուն **Գրիգոր Մագիստրոսն** է: Իսկ կնիք-մատանին, որ նա ստացել էր Կոս. Մոնոմախից (1042-1055) ընդհանրապես Ապիրատին վերաբերել ոչ մի կերպ չէր կարող: Այնպես որ Հասանի որդի Ապիրատին հարկավոր է հանգիստ թողնել:

Արձանագրության շարունակությունն այսպիսին է. ***«ԸՆԴ ՆՄԻՆ ԾԱՌԱՅԻՆ ԳՐԻԳՈՐՈՅ ԵՒ ՈՐԴՈՅ ԻՒՐՈՅ. ԵՒ ՅԻՇԱՏԱԿ ԿԱՐԳԵԱԼ ՅԵԿԵՂԵՑԻՔՍ ԿԵՉԱՌՈՒԱՑ ՑՈՒՐ ՄԱԳԻՍՏՌՈՍՆ ԿԵՆԴԱՆԻ Է ԱՄԵՆԱՅՆ ՇԱԲԱԹ ԱՒՐ ԶԺԱՄՆ ՀԱՍԱՆԱՅ ԱՐԱՍՑԵՆ ԱՆԽԱՓԱՆ, ԵՒ ՅԵՏ ԵԼԻՑՆ ՄԱԳԻՍՏՌՈՍԻՆ ԱՐԱՍՑԵՆ ԱՆԽԱՓԱՆ: ԱՐԴ ՈՐ ՈՔ ԱՅՍՄ ՎՃՌԻ ՀԱՍՏԱՏՆՈՅ ԽԱՓԱՆԵԼ ՋԱՆԱՅ, ԹԷ ԱՌԱՋՆՈՐԴԱՑ ՈՔ ԻՑԷ ԿԱՄ ՅԻՇԽԱՆԱՑ ԿԱՄ Ի ՔԱՀԱՆԱՅԻՑ, ԱՅՆՊԻՍԻՆ Յ ԵՒ ԺԸ ՀԱՅՐԱՊԵՏԱՑՆ ՆԶՈՎԵԱԼ ԵՂԻՑԻ....»*[2]: Բջնո թեմի առաջնորդ Հովհաննես եպիսկոպոսի և մեծ հայր Բարսեղի ձեռամբ ընդօրինակված 3-րդ արձանագիրն այս դեպքում էլ խափանել ջանացողին անիծում է նզովյալ լինել 319 հայրապետներից, իսկ կազմողներին՝ սրբերի օրհնանքին արժանանալ:

Կա մի խնդիր, որը ցավ է պատճառում: Տասնամյակներ առաջ Ն. Ակինյանը 3-րդ արձանագրության մեջ կատարել է մի տարանջատում՝ այդ մասը դիտելով որպես մեկ առանձին, այն է՝ թվով 4-րդ արձանագրություն (իրականում դրանք երեքն են): Այդ բանը նկատվել է և քննա-

---

[1] Այս դեպքում զարմանալի է Ն. Ադոնցի կասկածը, թե ոսկե մատանին ստանալը կեղծիք է: Տե՛ս **Գ. Յովսեփեան,** Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց մէջ, էջ 464:

[2] **Ն. Ակինեան**, Ներսէս Լամբրոնացի, էջ 375-376: Տեքստն արտատպել ենք Ն. Ակինյանի օգտագործած բնագրից (արձանագրությունը տրվել է Ն. Ակինյանի ուղղումներով):

դատվել[1]: Գործից անտեղյակ մեկը չի կարող մտքովն իսկ անց կացնել, թե այստեղ, տրոհելով ու առանձին քննելով ամբողջական մեծ արձանագրությունը, հետազոտողը պատրաստվում է ներկայացնել ‹‹գիտական նորույթ››: Այո՛, 3-րդ արձանագրության առաջին մասը վերագրված է Գրիգոր Մագիստրոսին, իրականում դա այդպես էլ կա: Իսկ ահա 2-րդ մասն իբր այլ ‹‹տառատեսակով›› է գրված և պատկանում է Ապիրատի գրչին, և այդ ‹‹հիմնավորումով›› գիտնականն այն ներկայացնում է որպես 1003 թվականի առանձին արձանագրություն[2]: Իրականում, այո՛, և՛ Գ. Հովսեփյանի, և՛ մեզ համար պարզ չէ, ‹‹թէ ինչ Հասան է, որին մատենագիր Գրիգոր Մագիստրոսն իւր արձանագրութեան մէջ կամենում է, որ յիշեն, քանի ինքը կենդանի է››[3]: Ըստ նրա՝ Հովհաննես եպիսկոպոսի և Հայր Բարսեղի խոսքերն ‹‹արձանագրված չէին քարի վրա, այլ թղթի կամ մագաղաթի››[4]: Այսինքն՝ հետնագիր էին: Իսկ իրականում պատվիրատուն ուղղակի տեքստը նրանց է փոխանցել՝ այն անմիջապես փորագրել տալու համար: Մեզ համար անհայտ պատճառներով Գ. Հովսեփյանն արձանագրության գրության ժամանակը տանում է 12-13-րդ դարեր: Խնդրով զբաղված մի այլ հետազոտող 1-ին մասը համարում է Վասակի որդունը, 2-րդ մասը Հասանի որդունը, բայց այն թվագրում 13-րդ դարով (1298 թ.), որպեսզի ապացուցի, թե հիշյալ եպիսկոպոս Հովհաննեսն իբր Ստ. Օրբելյանի մոտ հիշատակված անձն է[5]: Արձանագրության ոճն այնքան մագիստրոսյան է, որ արհեստականորեն բաժանելը ևս հնարավորություն չի տալիս արձանագրության Հասանին Մագիստրոսի հայրը չհամարել: Այո՛, Հասան է Գրիգոր Մագիստրոս Պահլավունու հոր երկրորդ անունը: Ուստի շատ հեռու գնալ պետք չէ: Գրվածքն իրենց կնիքով հաստատել են Բջնո սուրբ հայրերը: Նրանք իրականում 1003 թ. կամ 1298 թ. ապրած մարդիկ չեն: Արձանագրությունը գրած հեղինակները 1053 թ. իրադարձությունների ականատեսն ու ժամանակակիցներն են: Իրավիճակն այստեղ հիշեցնում է հայտնի առակը՝ կարապի, խեցգետնի ու գայլաձկան մասին: Ն. Ակինեանն արձանագրությունն Ապիրատի կազ-

---

1 Տե՛ս **Կ. Մաթևոսյան**, Հազարամյա Կեչառիսի հիմնադրման պատմությունից, էջ 88:

2 Տե՛ս **Ն. Ակինեան**, Ներսէս Լամբրոնացի, էջ 377:

3 Տե՛ս **Գ. Յովսեփեան,** Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց մէջ, էջ 161:

4 Նույն տեղում:

5 Տե՛ս **Կ. Մաթևոսյան,** Հազարամյա Կեչառիսի հիմնադրման պատմությունից, էջ 90-91:

մածն է համարում: Գ. Հովսեփյանը ժամանակը ետ է բերում, որպեսզի չեղարկի իրեն խանգարող Մագիստրոսի անունը, որը կոնկրետ վկայված է: Կ. Մաթևոսյանն էլ կարծում է, թե գրության մեջ հիշված կրոնավորները 1003 թ. ‹‹արձանագրության մեջ առկա Գրիգոր Մագիստրոսի (Գրիգոր Ապիրատի) հայրանունը՝ Հասան, նույնությամբ փոխադրել են 1051 թ. կրող (իմա. 1053 թ.-Ս. Մ.) արձանագրության մեջ››[1], իսկ կազմողները ապրել են 13-րդ դարի վերջին՝ 1298 թ.: Մենք այդպես չենք կարծում:

Ժամանակն է խոսել Հասան-Վասակի և մեծ մատենագիր Գրիգոր Մագիստրոսի մասին: Նա է, որ իր կողմից պատվիրված պատարագի ծեսի պարտադիր կատարումը պահանջում է որպես անխախտ պայման: Տեքստում պարզորեն հիշատակված է Գրիգոր Մագիստրոսի անունը, որ իր հայր Հասանի հիշատակին տոն է սահմանում: Դա Ապիրատը լինել, Մոնոմախ կայսեր հետ որևէ կերպ հանդիպել և այդ մասին արձանագրության մեջ նշել չէր կարող: Հաճախ մեջբերվող Վարդան Վարդապետի հաղորդածը, թե իբր Գրիգոր Մագիստրոսը չի կառուցել Կեչառիսը[2], այլ դա արել է ***Ապիրատը,*** եղած արձանագրությունների տվյալներով այդպիսի վերծանման ու եզրահանգման հիմք չեն տալիս: Ոճական առումով 2-րդ արձանագրությունը (1051 թ.) ստույգ կերպով պատկանում է ***Վասպուրականի Հայոց դուքս*** **Վասակի որդի Գրիգոր Մագիստրոս**՝[3] կոչվածին: Այսինքն՝ անկասկած է, որ գրությունը Վասակի որդունն է: 1053 թ. 3-րդ արձանագրության **Գրիգոր Մագիստրոսը՝ Հասանի որդին**, դարձյալ միևնույն անձն է, քանզի արքայական մատանին տրվել է «***ԳՐԻԳՈՐՈՅ ՄԱԳԻՍՏՌՈՍԻՆ,*** **ԿԻՏԱԻՆԻՆ ԵՒ ԴՈՒԿԻՆ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԵՒ ՏԱՐԱՒՆՈՅ ԱՐՇԱԿՈՒՆՈՅՆ ԵՒ ՀԱՅԿԱԶՆՈՅՆ**»[4]: Ակնհայտ է ու աներկբայելի, որ **Հասանը** այդ **կիտոնի և դուկի հայրն է**: Մի՞թե 1051 թ. ***Վասպուրականի Հայոց դուքս-ը և*** 1053 թ. ***Արշակունին ու Հայկազունը, Վասպուրականի ու Տարոնի դուկ(ս)ը միևնույն անձը չեն:***

Արձանագրության հեղինակն իր մասին ամենակարևոր տեղեկությունները հայտնում է և մեղավոր չէ, որ որոշ հետազոտողներ տեքստը վերծանում են յուրովի: «Արձանագրութեան առաջին մասը կը պատկանի Բջնեցի Գրիգոր Մագիստրոսի յիշատակին. երկրորդը բոլորգիր մասն է

---

[1] Նույն տեղում, էջ 91:

[2] Աշխարհացոյց Վարդանայ Վարդապետի, Բարիզ, 1960, էջ 97:

[3] **Գ. Յովսեփեան,** Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, էջ 158:

[4] **Ն. Ակինեան,** Ներսէս Լամբրոնացի, էջ 375:

Գրիգոր Ապիրատի արձանագրութեան.... Ապիրատ կը խնդրէ, որ ‹‹շաբաթ աւ(ու)ր զժամն›› Հասանայ (այսինքն իր հօր Հասանի համար-Ս.Մ.) կատարուի»,- գրում է Ն. Ակինյանը: Ու դեռ պարզ չէ՝ ինչպե՞ս է նա կարողանում պտտել ժամանակի անիվն այնպես, որ արձանագրության 1053 թ. վերափոխվում է 1003-ի[1]:

Մեծ հայագետ Լևոն Մելիքսեթ-Բեկը, խոսելով Սանահնում Մագիստրոսի գործունեության մասին և սրբավայրում պահլավունիական հետքեր նկատելով, մի անհայտ աղբյուրի հիման վրա, այնտեղի արձանագրություններում եղած անունների մասին գրում է. ‹‹Այս արձանագրությունների մեջ (Սանահինյան-Ս. Մ.), ի միջի այլոց, հիշատակվում են նաև՝ **Գրիգոր, Հասան,** Վահրամ և Սմբատ (անունները-Ս. Մ.**), ... Գրիգոր Մագիստրոսի հոր անունը Հասան էր,** հորեղբորը և տղայինը՝ Վահրամ, իսկ հորեղբորորդունը՝ Սմբատ››[2]: Այնուհետև նշում է այն վանքերը, որոնք իր գործունեության վաղ շրջանում կառուցել է Գրիգոր Մագիստրոսը: Դրանք են՝ Հավուց Թառը, Բջնիի Աստվածամոր և Կեչառիսի Ս. Գրիգոր եկեղեցիները[3]: Ինչպես այս դեպքում է խոսվում Մագիստրոսի շինարարական կոնկրետ գործունեության վայրերի, Հասան-Վասակ անունների նույնության մասին, այնպես էլ Ղ. Ալիշանն ունի մի դիտողություն, երբ իր **Այրարատ** աշխատության մեջ համեմատելով Հասան և Վասակ անունները՝ ասում է՝ չե՞ն արդյոք նույնը[4]:

Պահլավունիներին նվիրված իր ուշագրավ ուսումնասիրության մեջ Վր. Վարդանյանը Բջնիի Ս. Աստվածածին, Կեչառիսի Ս. Գրիգոր և Ս. Նշան, Հավուց Թառի Ս. Ամենափրկիչ վանքերը համարում է մագիստրոսյան շինություններ: Սանահնի վանքի համար նա եղել է հովանավոր, ուր և գտնվում է իրեն վերագրված սրահը՝ ‹‹Մագիստրոսի ճեմարան››-ը (Այդպիսի սրահներ եղել են նաև Ս. Կարապետի վանքում և այլուր)[5]: Իսկ կեչառիսյան 1-ին արձանագրության 1033 թվականի մասին գիտնականը գրում է. ‹‹**Հակասությունը փորձել է լուծել Գ. Հովսեփյանը, 995 թ. դի-**

---

[1] Նույն տեղում, էջ 376-377:

[2] **Լ. Մելիքսեթ-Բեկ**, ‹‹Վարդապետք Հայոց Հյուսիսային կողմանց›› և նրանց ինքնությունը, Մ. Ա. Ս. Էջմիածին, 2016, էջ 108:

[3] Նույն տեղում, էջ 109:

[4] Տե՛ս **Ղ. Ալիշան,** Այրարատ : Բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ, 1890, էջ :

[5] **Վ. Վարդանյան**, Պահլավունիները հայոց պետականության և հոգևոր անաղարտության պահապաններ, Ե., 2008, էջ 73:

տելով որպես եկեղեցու կառուցման սկզբի, իսկ 1003 թ. ավարտի տարի: Իհարկե, գիտնականի այդ ենթադրությունը կարոտ է լրացուցիչ ապացույցների››[1]: Իսկապես որ:

Ամփոփենք արձանագրությունների տվյալները: **Վերցնենք նախ 1-ին գրության հաղորդումը**: 1. Կառուցման ավարտը՝ **1033 թ., որի սկիզբը դրվել է Գագիկ Առաջինի և Սարգիս հայրապետի գահակալության օրոք: 2. Նշում է իր ինքնությունը՝** Գր. Մագիստրոս՝ որդի Հասանաի: 3. Նշում է իր կառույցը՝ եկեղեցի, 4. Հայտնում է իր նպատակը և 5. Խնդրում է բարեխոսություն և աղոթք իր հոգու համար:

Ապիրատին պաշտպանող հետազոտողներն առաջարկում են «ՆՁԲ» (1033) թվականը «ուղղելու» «ՆԾԲ»-ի (1003 թվականի)[2], իսկ տեքստում նշվում է. «Ես՝ Գր. Մագիստրոս՝ որդի Հասանայ»: Ընդունենք, որ նա Հասանի որդին է՝ Ապիրատը, և այդ Գր. Մագիստրոսը երեք գրություններում (1-ին, 2-րդ, 3-րդ) նշված Գր. Մագիստրոսներից մեկն է: Կ. Մաթևոսյանը գրում է. «**Նրանցից ավագը Հասանի որդի Գր. Մագիստրոսն է, որն առաջին անգամ հիշատակվում է 1001թ., մի քանի տարի անց կառուցել է Կեչառիսի վանքի Ս. Գրիգոր (Լուսավորիչ) մեծադիր եկեղեցին, մասնակցել Անիի թագավորության պատմության մի շարք իրադարձությունների, հիշատակվում է որպես «մեծ իշխան»: 1021 թ. մահացած այս իշխանին հետագայի պատմիչները կոչում են հիմնականում Ապիրատ անունով**»[3]: Սակայն բնավ որևէ պատմիչ նրան՝ **Ապիրատին,** չի անվանում Գր. Մագիստրոս և իբրև այդպիսին չի ճանաչում:

Թվով 2-րդ արձանագրությունը գրված է 1051 թ. «Ի Շ. ԹՈՒԱԿԱՆԻՍ, Ի ԺԱՄԱՆԱԿՍ ԿՈՍՏԱՆՏԻՆ ՄՈՆՈՄԱԽԻ ԹԱԳԱՒՈՐԻ՝ ՀԱՅՈՑ (յունաց) ԴՈՒՔՍՍ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ, ԳԱՒԱՌԻՍ ԾԱՂԿՆՈՒՑ ԵՍ ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ՝ ՈՐԴԻ ՎԱՍԱԿԱՅ ՀՐՈՎԱՐՏԱԿԱՒ ԵՒ ՀՐԱՄԱՆԱՒ ՎԵՐՈՅԱՍԱՑԵԱԼ ԹԱԳԱՒՈՐԻՍ՝ ՀԻՄՆԱԴՐԵԱԼ ՇԻՆԵՑԻ ԶԵԿԵՂԵՑԻՍ Ի ՏԵՂՈՒՈՋՍ, ՈՐ ԿՈՉԻ ԿԵՉԱՌՈՒՍ, Ի ՆԱԽԱՍԱՑԵԱԼ

---

[1] Նույն տեղում, էջ 74-75:

[2] Տե՛ս **Կ. Մաթևոսյան**, Անի-Շիրակի պատմության էջեր, էջ 138-139:

[3] **Կ. Մաթևոսյան, Ա**նիի ազնվականության պատմությունից կամ երեք Գրիգոր Մագիստրոս, էջ 5: Եթե այդ դուստրը գոյություն չի ունեցել, ապա ինչպես կարող էր ամուսնանալ անիծյալ Վեստ Սարգսի հետ: Տե՛ս Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, էջ 315-316 (ծանոթ. 28):

ԳԱՒԱՌԻՍ ԾԱՂԿՆՈՒՑ ՀԱՆԴԵՐՁ ՄԱՏՐԱՄԲ. ԵՒ ՆՈՒԻՐԵՑԻ ՀՏԱՃԱՐՍ ԵՒ ՀԵԿԵՂԵՑԻՍ ՅԱՆՈՒՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ՄԵՐՈՅ. ԵՒ ՀԱՐԴԱՐԵՑԻ ՀՍԱ ՍՊԱՍՈՒՔ, ԱՐԾԱԹԵՂԻՆՕՔ ԵՒ ՈՍԿԵՂԻՆՕՔ.....ՈՐՊԷՍ ՎԱՅԵԼ Է ՏԱՃԱՐԻՍ: ԴԱՐՁԵԱԼ ԵՏՈՒ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ ԳԵՕՂՍ ԵՒ ԱՅԳԻ ՄԻ»[1]:

Այստեղ Գրիգոր Մագիստրոսը շեշտում է՝ 1. 1051 թ. և Կոստանտին Մոնոմախի գահակալության օրերը և իր՝ Վասպուրականի դուքս լինելու պահը, 2. Դուքսի իշխանական պատիվ ունենալը. 3. Իր մագիստրոսական աստիճանը և Վասակ սպարապետի որդին լինելը, 4. Կեչառիսում հունական թագավորի հրամանով եկեղեցի շինելը (թերևս ավարտելը), 5. **Ս. Գրիգոր Լուսավորչի ա**նունով այն կոչելը, 6. Թանկարժեք սպասքով, գրքերով ու գրվածքներով ապահովելը և 7. Այն թեմական կենտրոն դարձնելը:

Այստեղ Գրիգոր Մագիստրոս Պահլավունու (Բջնեցու) նկատմամբ ցուցաբերվում է անհարկի թերահավատության մի օրինակ. «Մեր կարծիքով,- գրում է Կ. Մաթևոսյանը,- փաստաթղթում որոշ չափով մեծացվել է Գրիգոր Մագիստրոս Պահլավունու դերը Կեչառիսում՝ նպատակ ունենալով բյուզանդական արքունիքին ցույց տալ, որ վանքը պատկանում է Պահլավունիներին (նրանց հիմնածն է, ինչպես Մարմաշենը)»[2]: Իսկ մի՞թե հենց այդպես չէ: Պարզ երևում է՝ ինչը որ Գրիգոր Մագիստրոս Պահլավունու անվան հետ է կապված, վանում է հետազոտողին, և նա ուզում է ասել, որ Մագիստրոսն այստեղ ոչինչ չի արել, միայն մի քանի իրեր է նվիրել սրբավայրին և վերջ:

Կեչառիսի վանքի 3-րդ՝ ճակատային խոշոր արձանագրությունը 1053 թ. է գրվել (ոմանք այն համարում են նաև 1051 թվականին գրված)[3]: Սկսվում է 1. «*Ի ՀԻՆԳՀԱՐԻՒՐԵՐՐՈՐԴԻ[4] ԱՄԻ ԹՈՒԱԿԱՆՈՒԹԵԱՆՍ ԹՈՐԳՈՄԵԱՆ Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՆ ՍՈՒՐԲ ԵՒ ԻՆՔՆԱԿԱԼ ԹԱ-*

---

[1] **Կ. Մաթևոսյան,** Անի-Շիրակի պատմության էջեր, էջ 140:

[2] Նույն տեղում, էջ 141:

[3] Տե՛ս Նույն տեղում:

[4] Գ. Հովսեփյանը գրության թվականը ՝ **Ի ՀԻՆԳՀԱՐԻՒՐԵՐՐՈՐԴԻ (500+551=1051 թ.)** ձևը վերծանում է նոր ընթերցմամբ՝ տրոհելով այն Ի ՀԻՆԳՀԱՐԻՒՐ ԵՐՐՈՐԴԻ (**500+553=1053)4(թ.**): Տե՛ս **Գ. Յովսեփեան,** Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց մէջ, էջ 161: Մենք պայմանականորեն այս գրության թվականը ընդունում ենք 1053-ը ՝ ըստ Գ. Հովսեփյանի:

ԳԱՀՈՐԻՆ Կոստանդեայ Մաւնումախին ԲԵՐԱՒ ՈՍԿԻ ՄԱՏԱՆԻՍ »[1] և այլն: Սա ևս գրության և Մոնոմախի գահակալության թվականի միատեղ հիշատակումն է: 2. Կայսրից իշխանը ստացել է ոսկի մատանի, որով՝ 3. Ազատել է եկեղեցիները հարկերից և 4. Դա իրագործվել է Տարոնի և Վասպուրականի կուսակալ՝ բարեպաշտ ու առաքինի դուքս Գր. Մագիստրոսի շնորհիվ, ով ծագումով Արշակունի է ու Հայկազուն, այսինքն՝ արքայական վաղագույն տոհմից և արիական զարմից: 5. Խնդրում է աղոթել Մոնոմախ թագավորի և իր ու իր որդիների համար, 6. Սահմանում է ամենշաբաթյա հիշատակի օր Հասանի հոգու համար և այստեղ չի հայտնում, որ նա իր հայրն է: Պայման է դնում, որ իր մահվանից հետո ևս այդ օրն անխափան նշվի իր եկեղեցիներում: 7. Ավարտվում է Բջնո եպիսկոպոսների անեծքի բանաձևով:

Կառուցվածքային առումով 2-րդ և 3-րդ արձանագրությունները նման են իրար, նման են նաև ոճական առումով և Միասին վերցրած՝ մեծաքանակ նյութ են պարունակում[2]: Հարցն այժմ հետևյալն է՝ ո՞վ է 3-րդ Գր. Մագիստրոսը, որ Հասանի հիշատակի օր է սահմանում, և 1-ին ու 3-րդ Գր. մագիստրոսներից որն է **Հասանի որդին՝** երկո՞ւսը միաժամանակ, թե՞ մեկը միայն: Թվում է՝ երկուսն էլ միևնույն անձն են, միևնույն հոր միևնույն որդին: Բայց Ապիրատը 1053 թ. կենդանի չէր: Նա նույնիսկ կենդանի չէր և 1033 թ.: Այժմ ավելի հստակ դնենք Ապիրատ Ապիրատյանի ու երեք արձանագրությունների, թվում է, երեք Գր. մագիստրոսների ով լինելու հարցը: 1-ինին ոմանք համարում են այսպեսկոչված **Գրիգոր-Ապիրատ Մագիստրոս՝ Հասանի որդի**: Ըստ 2-րդ արձանագրության՝ 2-րդը **Գրիգոր Մագիստրոսն է՝ Վասակի որդին՝ Բջնեցին**: Սա «իսկականն» է, որքան էլ ասվածը զավեշտական թվա: Իսկ ո՞վ է 3-րդը՝ հզոր, առաքինի, բարեպաշտ Գրիգոր Մագիստրոսը՝ Վասպուրականի և Տարոնի կիտոնը և դուկը (դուքս), Արշակունին և Հայկազունը, որ Հասանի հիշատակի օրն է սահմանում: 1053 թվականը պերճացված է՝ **Ի ՀԻՆԳՀԱՐԻՒՐԵՐՈՐԴԻ ամի թվականութեանս Թորգոմեան** ձևով: **Կ. Մոնոմախի կուսակալ, Վասպուրականի ու Տարոնի դուքս, ծագումով Արշակունի և այլն.** սրանք կարևոր տեղեկություններ են. և չէ՞ որ դրանք կրկնությունն են 2-րդ արձանագրության: **Վասպուրականի ու Տարոնի**

---

[1] **Կ. Մաթևոսյան,** Անի-Շիրակի պատմության էջեր, էջ 141:

[2] Տե՛ս Նույն տեղում, էջ 146:

այս կուսակալը այստեղ չի՞ հիշեցնում Վասակի որդուն: Իրականում հիշեցնում է, և նրանք նման են: Վասակի որդի և Հասանի որդի Գրիգոր մագիստրոսներից կարո՞ղ ենք ստանալ մեկը: 1051-1053 թթ. Ապիրատը **Վասպուրականի ու Տարոնի** կուսակալ չէր, մտերմանալ **Կ. Մոնոմախի** հետ չէր կարող: Ուրեմն դա այնուամենայնիվ միևնույն կուսակալն է և միևնույն մարդը, այն է՝ մատենագիր Գրիգոր Մագիստրոսը, որ 2-րդ **արձանագրության մեջ Վասակի որդին է**: Ուրեմն Գրիգոր մագիստրոսները 2-րդ և 3-րդ արձանագրությունների մեջ նույնն են: Այդ դեպքում Վասակն ու Հասանը միևնույն մարդն են: Փաստ, որ անառարկելի է բերվածի արդյունքում: 1-ին արձանագրության Գրիգոր Մագիստրոսը՝ կրկին Հասանի որդի, այստեղ ենթադրյալ Ապիրատը չէ, որ 1033 թ. իր եկեղեցու նավակատիքն է կատարում (օծումը): Նա հենց այդ փաստն է նշում. «Որք ընթեռնոյք՝ զիս յաղաւթս յիշեցէք....»[1]: Ո**րք ընթեռնոյք** արտահայտությունը շատ պարտավորեցնող է: Այն հարկադրանք ու հորդոր ունի իր մեջ: Դա վերաբերում է նաև մերօրյա հետազոտողներին. թվականի սխալ լինելու պարագայում այն անվերապահորեն ուղղելու պահանջ կդառնար, ու 1033 թ. կդարձվեր 1003 թ., սակայն չի փոխվել: Այս Գրիգոր Մագիստրոսը՝ Հասանի որդին, գրեթե չի տարբերվում 3-րդ արձանագրության Գրիգոր Մագիստրոսից, և ինքն էլ Հասանի որդի է: Միայն թե 3-րդում նա Տարոնի կուսակալն է ու հոր հիշատակի համար տոն է սահմանել տալիս: Հասկանալի է, որ միևնույն շինության պատի երկու արձանագրություն երկու տարբեր հասանների որդիներ չպիտի լինեն, ոչ էլ այստեղ երկու տարբեր Գրիգոր մագիստրոսներ պիտի հանդես գային: Ապիրատը կամ Գրիգոր-Ապիրատ Մագիստրոսը 1053 թ. կենդանի չէր և գրության հեղինակ ու պատվիրատու լինել չէր կարող: 2-րդ արձանագրությունը դառնում է այն առանցքը, որի շուրջ պտտվում են իրերն ու անձինք: Այդ իսկապես կարևոր հենման կետը հնարավորություն է ընձեռում բացահայտել մութ ու խրթին հարցերը, կտրել գորդյան հանգույցը: «***Ի ԺԱՄԱՆԱԿՍ ԿՈՍՏԱՆՏԻՆ ՄՈՆՈՄԱԽԻ ԹԱԳԱՒՈՐԻ՝ ՀԱՅՈՑ (Յունաց) ԴՈՒՔՍՍ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ, ԳԱՒԱՌԻՍ ԾԱՂԿՆՈՒՑ ԵՍ ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ՝ ՈՐԴԻ ՎԱՍԱԿԱՅ***» գրությունը փաստում է, որ նա Վասպուրականի դուքսն է, որդին է Վասակ սպարապետի, իսկ 3-րդ արձանագրությունը միևնույն մարդն է՝ «**Կ. Մոնոմախի կուսակալ, Վաս-**

[1] Նույն տեղում, էջ 138:

պուրականի ու Տարոնի դուքս, ծագումով Արշակունի»-ն է՝ որդին Հասանի: Ստացվում է.

1. Երեք արձանագրություններում նշված Գրիգոր մագիստրոսները միևնույն անձն են: Դա 11-րդ դ. կեսերին մեծ համբավ ձեռք բերած Գրիգոր Մագիստրոս Պահլավունին է:

2. Հասան անունը երկանուն է, և այն կրել է նաև Մագիստրոսի հայր Վասակը, ինչը հաստատվում է Հովհաննավանքի (1033 թ). արձանագրությամբ:

Այսպիսով՝ մագիստրոսյան կնճիռը մեզ մատուցում է **Հասան** անվան **չորս հիշատակում**: Առաջինը Մ. Ուռհայեցու վկայակոչած Հասանն է՝ Ապիրատի հայրը: Մնացյալ երեքը միավորված են մեկ անձի մեջ: Նրա անունը նախ հիշատակվում է Հովհաննավանքի 1033 թ. արձանագրության մեջ: Գրված է. «***ԱՐՔ ՍՈՔԱ, ՈՐ ԱՆԱԽՐԻՆԱՑ ՄԵՌԱՆ Ի ՆԻԳ, ԵՒ ՀԱՍԱՆԱՅ ՈՂՈՐՄԵՍՑԻ ՔՐԻՍՏՈՍ»:*** Ստույգ է, որ Ֆիլլիպեին, Չորտվանելին և այլ ազատների ու զորքին կռվի դաշտ է տանում քաջ Վասակ սպարապետն իր բերդից: Այդ Հասանը ուղղակի ամեն ինչով նույնանում է Կեչառիսի 1-ին արձանագրության Հասանի հետ, ուր հիշատակվում է Գրիգոր Մագիստրոսի անունը, որ անվանվում է որդի Հասանի: 3-րդ հիշատակումը վերաբերում է Կեչառիսի 3-րդ արձանագրությանը, որում պատարագի օրվա պահանջ է դրվում: Այս դեպքում էլ որդին Գրիգոր Մագիստրոսն է՝ Վասպուրականի ու Տարոնի դուքսը, ինչը կասկած չի թողնում, որ հասանները ոչ թե մի քանիսն են, այլ մեկը՝ նա, որ նույն Վասակ քաջն է: Միաժամանակ Կեչառիսի և Հովհաննավանքի արձանագրությունների Հասանը չի կապվում և չի նույնանում պատմագրական աղբյուրներում հիշվող Ապիրատի հայր Հասանի հետ, որի անունը չի օգտագործված մեր մատնանշած ոչ մի վիմագրում: Այնուամենայնիվ, մենք հակված ենք կարծել, որ **Վասակի որդի** և **Հասանի որդի** լինելու հանգամանքը Մագիստրոսը կանխամտածված է օգտագործում՝ ցույց տալու համար, որ իր հայրն այդ երկու անուններն էլ հավասարապես կրել է: Դա նա նախ հաստատում է կեչառիսյան վիմագրերում, և ապա նույն հաստատվում է Հովհաննավանքի արձանագրությամբ:

Աղյուսակ 1

ՊԱՀԼԱՎՈՒՆԻՆԵՐԻ ՏՈՀՄԱԾԱՌԸ
(Իրական Պահլավունիներ)



Աղյուսակ 2

ԱՊԻՐԱՏՅԱՆ (ՀԱՍԱՆՅԱՆ) (ԱԾԱՆՑՅԱԼ) ՊԱՀԼԱՎՈՒՆԻՆԵՐ
(ԿԱՄ ՊԱՀԼԱՎՈՒՆԻՆԵՐԸ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ)



ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ՄԱՍԻՆ

Սարգիս Մխիթարյան

Բանալի բառեր՝ *Վասակ, Բջնի, Մագիստրոս, Ապիրատ, Գարեգին, Կեչառիս, Հավուց Թառ*

Վերջին ժամանակներս որոշ գիտնականներ Գր. Մագիստրոսի անվան հետ նշում են Գր. Ապիրատի անունը: Նրանք կարծում են, թե վերջինս համահեղինակ է կեչառիսյան կառույցների և համասեփականատեր Բջնիի Պահլավունիների նյութական ժառանգության: Այսպես կոչված Գրիգոր-Ապիրատ Հասանայանը նա չէ, ում ներկայացնում են նրանք: Իր ժամանակին հայագետ Ն.Ակինյանը կարծում էր, թե Գր. Մագիստրոսը, որ հիշատակվում է կեչառիսյան արձանագրություններում, նույն ինքը Ապիրատն է: Հմազիչ փաստերի բացակայությունը թույլ է տալիս չհամաձայնել չհիմնավորված այդ կարծիքի հետ: Արհեստական նույնացումը Ապիրատի և Գր. Մագիստրոսի անունների միջև չի լուծում խնդիրը հօգուտ Ապիրատի: Հոդվածում մատենագրական աղբյուրների հիման վրա մենք հաստատում ենք, որ նշված Հասանի որդի Գր. Մագիստրոսը հանդիսանում է միջնադարյան բանաստեղծը, ով ոչ մի կապ չունի Ապիրատի հետ:

ЛЕТОПИСИ О ГРИГОРЕ МАГИСТРОСЕ

Саргис Мхитарян

Ключевые слова: Васак, Бджни, Магистр, Апират, Гарегин, Кечарис, Авутс Тар

Недавно рядом с именем Григори Магистра некоторые ученные начали упоминать имя Григори Апирата. Считается, что он является соавтором Кечариских здании /сооружении/ и совладельцем сословий Пахлавуни в Бжни. Так называемый Григор - Апират Хасанян не тот, кто представлен некоторыми учеными. В свое время арменолог Н. Акинян считал, что Григор Магистр, намеченный в Кечариских протоколах, и есть тот самый Апират. Отсутствие убедительных доказательств позволяет не согласиться с неоправданным мнением. Икусственная идентификация имен Апират и Григор Магистр не решает проблему в пользу Апирата. В статье, на основе библиографических источников, мы подтверждаем, что сын Хасана Григорий Магистр, - великий средневековый поэт и не имеет ничего общего с Апиратом.

CHRONICLES ABOUT GRIGOR MAGISTROS

Sargis Mkhitaryan

Keywords: *Vasak, Bjni, Magister, Apirat, Garegin, Kecharis, Havuts Tar*

Recently together with Grigor Magistros some Grigor Apirat Magistros is often mentioned. He is supposed to be a co-author of Kecharisyan buildings and one of the owners of Pahlavunyats estates in Bjni. The so called Grigor - Apirat Hasanyan is not the one whom some scientists represent. There was a time when armenologist N. Akinyan thought that Grigor Magistros, mentioned in Kecharisyan protocols, was Apirat. But the lack of solid facts allows us to disagree with the view that unjustified. The artificial identification of the names Apirat and Grigor Magistros doesn't solve the problem in favour of Apirat. In the article we confirm that Hasan's son Grigor Magistros is a great medieval Armenian poet and not Apirat basing on real bibliographical sources.